ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 01

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ կետով, որոշում եմ՝

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ բնակավայրի 1-րդ փ. 7/1 հասցեում հասարակական կառուցում, նոր կառուցվող օբյեկտի շինարարական աշխատանքների կատարման արդյունքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ հարուցել վարչական վարույթ:

2. Կառուցապատող Վ. Մաթևոսյանին պատշաճ կարգով ծանուցել 11.01.2023 թվականին ժամը 15:00-ին կայանալիք լսումների մասին:

3. Սույն որոշման պահանջների կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Գյուլագարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության նկատմամբ վերահսկողության իրականացնող մասնագետների վրա:

4. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Գյուլագարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակից Վ. Մաթևոսյանի ծանուցման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ

20 __ թ. _____ ____
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 02

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ, հիմք ընդունելով Գրիշա Քալաշյանի հայտը, որոշում եմ.

1.Բավարարել Գրիշա Քալաշյանի հայտը՝ Գյուլագարակ համայնք, գ. Գարգառում գովազդային վահանակի տեղադրման թույլտվություն տրամադրելու մասին, ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան «Գրիշա Քալաշյան» ԱՁ-ին տալ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն 01.01.2023թ-31.12.2023թ. ժամանակահատվածի համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ սահմանված կարգով հայտատուին տրամադրել հպամապատասխան թույլտվությունը:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ

20 __ թ. _____ ____
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 03

ԱՆԱՀԻՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ Կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով ԱՁ Անահիտ Բաղդասարյանի հայտը, որոշում եմ.

1.Բավարարել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղում գործող ԱՁ Անահիտ Բաղդասարյանի հայտը, նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 01.01.2023թ-ից մինչև 30.06.2023թ ժամանակահատվածի համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՌՈՒԶԱՆ ՕՀԱՆՅԱՆ

20 __ թ. _____ ____
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 04

ՆԻԿՈԼԱՅ ՔԱԼԱՇՅԱՆԻՆ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ Կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով ԱՁ Նիկոլայ Քալաշյանի հայտը, որոշում եմ.

1.Բավարարել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղում գործող ԱՁ Նիկոլայ Քալաշյանի հայտը, նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 01.01.2023թ-ից մինչև 31.12.2023թ ժամանակահատվածի համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ

20 __ թ. _____ ____
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 05

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով Գրիշա Քալաշյանի հայտը, որոշում եմ.

1.Բավարարել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղում գործող ԱՁ Գրիշա Քալաշյան-ի հայտը, «Գրիշա Քալաշյան» ԱՁ-ին տալ հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն 01.01.2023թից մինչև 30.12.2023թ ժամանակահատվածի համար:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ

20 __ թ. _____ ____
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 06

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, որոշում եմ՝

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ բնակավայրի 06-029-0057-0038 ծածկագրի տնամերձ հողամասին և բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, Գյուլագարակ բնակավայր, 3-րդ փողոց, 18 բնակելի տուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ

2022 թ. 01 09
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 07

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, որոշում եմ՝

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ բնակավայրի 06-029-0016-0001 ծածկագրի տնամերձ հողամասին և բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, Գյուլագարակ բնակավայր, 10-րդ փողոց, 11 բնակելի տուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՌՈՒԲԵՆ ՕՀԱՆՅԱՆ

2022 թ. 01 09
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 08

ԱՆԱՀԻՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ Կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով ԱՁ Անահիտ Մաթևոսյանի հայտը, որոշում եմ.

1.Բավարարել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղում գործող ԱՁ Անահիտ Մաթևոսյանի հայտը, նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 01.01.2023թ-ից մինչև 30.06.2023թ. ժամանակահատվածի համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ

20 __ թ. _____ ____
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 09

ԱԼԵՆ ԹԱՐԽԱՆՅԱՆԻՆ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ Կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով ԱՁ Ալեն Թարխանյանի հայտը, որոշում եմ.

1.Բավարարել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղում գործող ԱՁ Ալեն Թարխանյանի հայտը, նրան տալ ծխախոտի, ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվություն 01.01.2023թվականից մինչև 31.12.2023թվականը ժամանակահատվածի համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ

20 __ թ. _____ ____
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 10

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, որոշում եմ՝

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Պուշկինո բնակավայրի 06-093-0001-0006 ծածկագրի տնամերձ հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, Պուշկինո բնակավայր, 2-րդ փողոց, 23/2 հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ

20 __ թ. _____ ____
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 11

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, որոշում եմ՝

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ բնակավայրի 06-027-0056-0002 ծածկագրի տնամերձ հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, Գարգառ բնակավայր, Ձորամիջի փողոց 2 հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ

20 __ թ. _____ ____
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 12

ԳԱՅԱՆԵ ՋԻԼԱՎՅԱՆԻՆ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ Կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով ԱՁ Գայանե Ջիլավյանի հայտը, որոշում եմ.

1.Բավարարել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղում գործող ԱՁ Գայանե Ջիլավյանի հայտը, նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 01.01.2023թ-ից մինչև 31.03.2023թ ժամանակահատվածի համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ

20 __ թ. _____ ____
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 13

ՍԱՄՎԵԼ ՕՀԱՆՅԱՆԻՆ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ Կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով ԱՁ Սամվել Օհանյանի հայտը, որոշում եմ.

1.Բավարարել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղում գործող ԱՁ Սամվել Օհանյանի հայտը, նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվություն 01.01.2023 թվականից մինչև 31.03.2023թ.:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ

20 __ թ. _____ ____
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 14

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ 15.07.2022 ԹՎԱԿԱՆԻ N 20/22 ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՊՈՐԻՆԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԻՑ ԱՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

1.Վարչական ակտի ընդունման համար հիմք հանդիսացած փաստերը.

Քաղաքացի Վահագն Մաթևոսյանը (այսուհետ՝ Կառուցապատող) 28.04.2022 թվականին հայտ է ներկայացրել Գյուլագարակի համայնքապետարան Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ բնակավայրի 1-ին փ. 7/1 հասցեում հասարակական նշանակության օբյեկտի կառուցման նպատակով ճարտարապետահատակագծային առաջադրանքի թույլտվություն ստանալու համար:

10.05.2022 թվականին Կառուցապատողին տրամադրվել է N 13/22 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք) :

Նշված նախագծային թույլտվության հիման վրա մշակված աշխատանքային նախագիծը համաձայնեցվել է Գյուլագարակի համայնքի ղեկավարի պաշտոնակատարի կողմից և 15.07.2012 թվականին տրվել է N 20/22 շինարարության թույլտվությունը:

Սակայն կառուցապատման ընթացքում պարզվել է, որ աշխատանքներն իրականացվում են օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումներով:

Մասնավորապես Գյուլագարակի համայնքապետարանի համապատասխան մասնագետի կողմից պարզվել է, որ Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ բնակավայրի 1-ին փ. 7/1 հասցեում Կառուցապատողի կողմից կառուցվող շինությունը չի համապատասխանում համաձայնեցված աշխատանքային նախագծին՝ պահպանված չէ շինության ճակատային գծով պայմանավորված կառուցապատման գիծը:

12.12.2022 թվականին Գյուլագարակ բնակավայրի 1-րդ փ. 7/1 հասցեում իրականացվել է կառուցվող շինության չափագրման աշխատանքներ և պարզվել է, որ կադաստրային քարտեզում առաջանում է 4.3 քմ մակերեսով հողամասի համդրում 06-029-0084-0001 և 06-029-0560-0001 կադաստրային

ծածկագրերի տակ գտնվող միավորների հետ, որոնց նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր են, իսկ գործառնական նշանակությունը ընդհանուր օգտագործման հողեր և ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի համաձայն՝ արգելվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերը, որոնք՝ բնակավայրերում ընդհանուր օգտագործման հողեր են (հրապարակներ, փողոցներ, ճանապարհներ, գետափեր, զբոսայգիներ, պուրակներ, այգիներ, լողափեր և ընդհանուր օգտագործման այլ տարածքներ):

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ կետի դրույթները՝ հարցի ուսումնասիրության ու կարգավորման նպատակով Գյուլագարակի համայնքի ղեկավարի Ժ/Պ Ռ. Օհանյանի կողմից հարուցվել է վարչական վարույթ, որի շրջանակներում Գյուլագարակի համայնքապետարանի աշխատակազմի կողմից 11.01.2023 թվականին հրավիրվել է լսումներ:

Կառուցապատող Վ. Մաթևոսյանը 05.01.2023 թվականին պատշաճ կարգով (առձեռն ծանուցմամբ) տեղեկացվել է կայանալիք լսումների վերաբերյալ:

Վարույթի շրջանակներում քննարկվող հարցի կապակցությամբ տրված բացատրություններով Գյուլագարակի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ Սարգիս Ղուկասյանը և Սմբատ Սուքիասյանը նշել են, որ իրականացված տեղատեսության արդյունքում պարզվել է, որ Գյուլագարակ բնակավայրի 1-ին փ. 7/1 հասցեում կառուցվող շինության շինարարական աշխատանքներն իրականացվում են կառուցապատման գծից դուրս:

Կառուցապատողն ունենալով անհրաժեշտ քաղաքաշինական փաստաթղթեր, սկսել է Գյուլագարակ բնակավայրի 1-ին փ. 7/1 հասցեում հասարակական նշանակության օբյեկտի կառուցման շինարարական աշխատանքները, որոնք իրականացվել են համաձայնեցված նախագծի էական շեղումներով՝ մասնավորապես շինությունը իրականացվել է համաձայնեցված նախագծով նախատեսված հատակագծային արտաքին չափերի շեղումներով, ինչպես նաև դրանով ծանրաբեռնվել է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն, որոնց նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր են, իսկ գործառնական նշանակությունը ընդհանուր օգտագործման հողեր:

Հիմք ընդունելով լսումների արդյունքում ուսումնասիրված ապացույցները, վարույթի մասնակից անձանց բացատրությունները՝ հաստատվել է, որ համաձայնեցված նախագծում առկա են իրականությանը չհամապատասխանող սխալ տվյալներ, մասնավորապես՝ համաձայնեցված նախագծում պահպանված է կառուցապատման գիծը, սակայն իրականում կառույցն իրականացվել է կառուցապատման գծից առաջ՝ ակնհայտ խախտումով:

2.Վարչական ակտն ընդունելու հիմնավորումները.

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ պարբերության «ա» կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով՝ հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա:

Նույն պարբերության «գ» կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են քաղաքաշինական գործունեություն (...) իրականացնել բացառապես հաստատված քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի ե) կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կայացման և համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով որոշման կատարման ապահովման նկատմամբ:

«Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարը կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքի վարչական սահմաններում, օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ կիրառում է վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

Նույն հոդվածի 1.1-րդ մասի համաձայն՝ ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման (ապամոնտաժման):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերը, այդ թվում՝ ինքնակամ կառույցի առկայությամբ հողամասը ձեռք բերողը, կրում է դրա վրա գտնվող ինքնակամ կառույցի օգտագործման ու ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) հետ կապված ռիսկերը:

Ինքնակամ կառույցները չեն կարող ճանաչվել օրինական, և դրանք ենթակա են քանդման, եթե կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման 2-րդ կետով սահմանված է, որ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կարույցները՝

ա) որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) որոնք կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ

անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի համաձայն՝սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ կամ առանց թույլտվության քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով:

Նույն հոդվածի 1-ին մասում նշված արարքները գյուղական բնակավայրերում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձինք պատասխանատվություն են կրում վարչական մարմիններին կեղծ տվյալներ, տեղեկություններ ներկայացնելու համար:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ անձինք՝ ընդհանրապես, իսկ սույն պարագայում՝ կառուցապատողը պարտավոր էր վարչական մարմիններին ներկայացնել իրականությանը համապատասխանող, ճշգրիտ տեղեկություններ և, ըստ այդմ, կառուցապատումն իրականացնել բացառապես դրանց հիման վրա հաստատված քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:

Հիշյալ իրավակարգավորման տեսանկյունից դիտարկելով սույն գործի փաստերը՝ պետք է արձանագրել, որ կառուցապատող Վ. Մաթևոսյանի կողմից ներկայացվել են կեղծ տեղեկություններ, այսինքն՝ հաստատված աշխատանքային նախագծումԳյուլագարակ բնակավայրի 1-ին փ. 7/1 հասցեում կառուցվող օբյեկտը պահպանել է կառուցապատման գիծը, այնինչ փաստացի խնդրո առարկա օբյեկտի շինարարական աշխատանքներն իրականացվել են կառուցապատման գծի էական խախտումներով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա (...):

Նույն հոդվածի 4-րդ մասի «բ» և «գ» կետերի համաձայն՝ վարչական ակտի հասցեատերը վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք չունի, եթե նա՝

բ)համապատասխան վարչական ակտի ընդունմանը հասել է կեղծ կամ ոչ լրիվ փաստաթղթեր ներկայացնելու միջոցով,

գ)վարչական ակտի ոչ իրավաչափ լինելու մասին կամ այդ մասին պարտավոր էր իմանալ՝ իր համար մատչելի տեղեկությունների հիման վրա:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ եթե վարչական վարույթ հարուցելուց հետո վարչական մարմնի տրամադրության տակ առկա են համապատասխան վարչական ակտն ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա վարչական մարմինը պարտավոր է վարչական ակտն ընդունել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում՝ չսպասելով ընդհանուր կամ հատուկ ժամկետի լրանալուն:

Նույն օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ նույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ ակտով այլ բան նախատեսված չէ:

Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները՝

տվյալ դեպքում կառուցապատող Վ. Մաթևոսյանը նախապես իմացել է (պարտավոր էր իմանալ) աշխատանքային նախագծում առկա իրականությանը չհամապատասխանող տվյալների մասին:

Ելնելով վերոգրյալից՝ պետք է փաստել, որ սույն պարագայում 15.07.2012 թվականին տրված է N 20/22 շինարարության թույլտվությունը ընդունվել է կառուցապատող Վահագն Մաթևոսյանի կողմից աշխատանքային նախագծում ներկայացված կեղծ տեղեկությունների հիման վրա և հանդիսանում է ոչ իրավաչափ վարչական ակտ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի դրույթներով՝ որոշում եմ՝

1. Անվավեր ճանաչել Գյուլագարակ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 15.07.2012 թվականին տրված N 20/22 շինարարության թույլտվությունը:
2. Առաջարկել Կառուցապատողին սեփական նախաձեռնությամբ, ձեռնարկել քայլեր համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ապօրինի տիրապետումից ազատելու և նախկին տեսքին բերելու ուղղությամբ 10-օրյա ժամկետում:
3. Կառուցապատող Վ. Մաթեոսյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով և վճարումը կատարել 900255001746 հաշվեհամարին:

4. Սույն որոշման պահանջների կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Գյուլագարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման վերահսկողության իրականացնող մասնագետների վրա:
5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում Գյուլագարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը և կարող է 15-օրյա ժամկետում վարչական կարգով բողոքարկվել Գյուլագարակի համայնքապետարանին կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ

2022թ. հունվարի 13
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 15

ՖԼՈՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ Կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով ԱՁ Ֆլորա Սարգսյանի հայտը, որոշում եմ.

1.Բավարարել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղում գործող ԱՁ Ֆլորա Սարգսյանի հայտը, նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 01.01.2023թ.-31.03.2023թ. համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԴԱՎԻԹ ԱՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ

20 __ թ. _____ ____
գ.Գյուլագարակ